



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

27 մայիսի 2021 թվականի թիվ 70-Ս

ք. Երևան

«ՀՈՒՍԱԲԵՐ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) ուսումնասիրելով 2021 թվականի ապրիլի 23-ին իր նախաձեռնությամբ հարուցված թիվ 5 վարչական վարույթի նյութերը՝ *պարզեց*.

Հանձնաժողովը «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) վերապահված իր վերահսկողական գործառույթներն իրականացնելիս՝ հայտնաբերել է Օրենքի պահանջի խախտում, այն է՝ տեսալսողական մեդիաձառայություն մատուցող «ՀՈՒՍԱԲԵՐ» ՓԲ ընկերության (այսուհետ՝ Հեռարձակող) կողմից իր 2020 թվականի հասույթի գոյացման բացվածքը և չափի վերաբերյալ տեղեկությունը մինչև 2021 թվականի ապրիլի 1-ը Հանձնաժողով չի ներկայացվել:

Հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով՝ 2021 թվականի ապրիլի 23-ին Հեռարձակողի նկատմամբ հարուցել է վարչական վարույթ:

Հանձնաժողովը հարուցված վարչական վարույթի մասին 2021 թվականի ապրիլի 23-ին ծանուցել է Հեռարձակողին և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց պարզաբանումները և բացատրությունները:

Հարուցված վարչական վարույթի ընթացքում Հեռարձակողը 2021 թվականի ապրիլի 28-ին Հանձնաժողով ներկայացրել է իր 2020 թվականի հասույթի գոյացման բացվածքը և չափի վերաբերյալ տեղեկություն, սակայն որևէ պարզաբանում և բացատրություն չի ներկայացվել՝ Օրենքով սահմանված ժամկետում այդ տեղեկությունը չներկայացնելու վերաբերյալ:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Այսպիսով, վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է հետևյալը.

«Տեսալսողական մեդիայի մասին» թիվ ՀՕ-395-Ն օրենքն ընդունվել է 2020 թվականի հուլիսի 16-ին, որը պաշտոնական հրապարակումների միասնական կայքում (arlis.am) հրապարակվել է 2020 թվականի օգոստոսի 6-ին և Օրենքն ուժի մեջ է մտել 2020 թվականի օգոստոսի 7-ին: Համաձայն Օրենքի 1-ին հոդվածի 4-րդ մասի՝ սույն օրենքը Հայաստանի Հանրապետությունում տարածվում է տեսալսողական մեդիաձառայություն մատուցողների, օպերատորների, կարգավորող պետական մարմնի և հանրային տեսալսողական մեդիաձառայություն մատուցողի գործունեության կառավարումն ապահովող և հսկողություն իրականացնող մարմնի վրա: Ուստի, Օրենքով սահմանված նորմերի պահանջները պարտադիր են ոլորտում գործունեություն իրականացնող բոլոր տեսալսողական մեդիաձառայություն մատուցողների և օպերատորների համար, այս վարույթի շրջանակում «ՀՈՒՍԱԲԵԸ» ՓԲ ընկերության համար:

Օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հեռարձակողները և օպերատորները պարտավոր են յուրաքանչյուր տարի մինչև ապրիլի 1-ը կարգավորող պետական մարմին ներկայացնել նախորդող տարվա հասույթի գոյացման բացվածքը և չափի վերաբերյալ տեղեկություն:

Հաշվի առնելով, որ Օրենքն ուժի մեջ է մտել 2020 թվականի օգոստոսի 7-ին և տեսալսողական մեդիայի ոլորտում սահմանվել են նոր կարգավորումներ, ուստի, Հանձնաժողովը, և՛ 2020 թվականի օգոստոսի 12-ի թիվ 05-475, և՛ 2021 թվականի մարտի 12-ի թիվ 05-230 գրություններով Հեռարձակողին տեղեկացրել է Օրենքի վերոնշյալ դրույթի մասին և թիվ 05-230 գրությամբ առաջարկել է Օրենքով սահմանված ժամկետում Հանձնաժողով ներկայացնել 2020 թվականի հասույթի գոյացման բացվածքը և չափի վերաբերյալ տեղեկություն, սակայն մինչև վարչական վարույթի հարուցումը Հեռարձակողի կողմից պահանջվող տեղեկատվությունը Հանձնաժողով չի ներկայացվել:

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված և ներկայացրած փաստերը, որի արդյունքում հայտնի է դարձել, որ Հեռարձակողը մինչև 2021 թվականի ապրիլի 1-ը Հանձնաժողով չի ներկայացրել իր 2020 թվականի հասույթի գոյացման բացվածքը և չափի վերաբերյալ տեղեկություն:

Այսպիսով, վարչական վարույթի նյութերի ուսումնասիրության և համադրման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է, որ Օրենքով Հեռարձակողների և օպերատորների համար պարտավորություն է սահմանված՝ յուրաքանչյուր տարի մինչև ապրիլի 1-ը Հանձնաժողովին ներկայացնել նախորդող տարվա հասույթի գոյացման բացվածքը և չափի վերաբերյալ տեղեկություն, սակայն Հեռարձակողի կողմից չի պահպանվել Օրենքի պահանջը և Օրենքով սահմանված ժամկետում Հանձնաժողով չի ներկայացվել 2020 թվականի հասույթի գոյացման բացվածքը և չափի վերաբերյալ տեղեկությունը, դրանով իսկ խախտելով Օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը:

Փաստում ենք նաև, որ լիցենզիա ստացած Հեռարձակողը հեռարձակում է տեսալսողական ծրագրեր և պարտավոր է պահպանել տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջները, իսկ օրենքի դրույթները խախտելու դեպքում կրել պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով, ուստի, օրենքի պահանջի չկատարումն ինքնին բերում է պատասխանատվության:

Հեռարձակողը պետք է հաշվի առնի, որ օրենքներով հստակ սահմանվում են իրավական նորմեր, որոնց չպահպանելը առաջացնում են իրավական հետևանքներ և Հեռարձակողը պատասխանատվություն է կրում տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող օրենսդրության կիրառման ապահովման համար և տվյալ դեպքում Հեռարձակողը պարտավոր էր պահպանել Օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դրույթի պահանջը:

Հեռարձակողի կողմից վարչական վարույթի հարուցումից հետո 2020 թվականի հասույթի գոյացման բացվածքը և չափի վերաբերյալ տեղեկությունը (ներկայացվել է 2021 թվականի ապրիլի 28-ին) Օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ Հանձնաժողով ներկայացնելը բավարար հիմք չէ Հեռարձակողի նկատմամբ օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն չկիրառելու համար:

Այսպիսով, Հեռարձակողի կողմից իրականացվել է իրավախախտում, որը համապատասխանում է Օրենքի 57-րդ հոդվածի 28-րդ մասի հատկանիշներին:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ կարգավորող պետական մարմինը՝ Օրենքի խախտման կամ իր որոշումները չկատարելու դեպքում կիրառում է պատասխանատվության միջոցներ:

Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կարգավորող պետական մարմնի կողմից տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին կարգավորող պետական մարմնին գրավոր տեղեկացվելու դեպքում կարգավորող պետական մարմինը կիրառում է հետևյալ վարչական տույժերը.

- 1) գրավոր նախազգուշացում.
- 2) տուգանք.
- 3) հեղինակագործման կամ լիցենզիայի գործողության կասեցում.
- 4) հեղինակագործման կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

Օրենքի 57-րդ հոդվածի 28-րդ մասը սահմանում է.

«Կարգավորող պետական մարմին նախորդող տարվա հասույթի գոյացման բացվածքի և չափի վերաբերյալ տեղեկություն չներկայացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով»:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասով, 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով, 55-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 57-րդ հոդվածի 28-րդ մասը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշեց**.

1. «ՀՈՒՍԱԲԵՐ» ՓԲ ընկերության նկատմամբ կիրառել Օրենքի 57-րդ հոդվածի 28-րդ մասով սահմանված տույժը՝ տուգանելով սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «ՀՈՒՍԱԲԵՐ» ՓԲ ընկերությանը պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՑԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

27 մայիսի 2021թ.
ք. Երևան